ՄԻՔԱՅԵԼ Վ. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ, Հայկական Կիլիկիոն բերդերն ու բերդաքաղաքները: Վենետիկ—Ս. Ղազար, 1989, 629 էջ, լուս., քարտեզ.:

Վերջին 15 տարիների ընթացքում արտասահմանում հայ և օտար մասնագետներ բազմիցս անդրադարձել են Կիլիկիայի հայկական պետության պատմությանն ու հատկապես ճարտարապետությանը: Դեռևս 1970 թ. լույս տեսավ հայր Միքայել Հովհաննեսյանի «Հայաստանի բերդերը» ստվարածավալ գիրքը, որի ներածության մեջ նա խոստացել էր առանձին հատորով անդրադառնալ Կիլիկիայի բերդերին: Եվ ահա, գրեթե 20 տարի անց, իրականանում է մխիթարյան հոր խոստումը: Մեր սեղանին է 630 էջանոց մի նկարազարդ ուսումնասիրություն, որի ատաղձը Կիլիկիային նվիրված աշխատություններն են (Վ. Լանգլուայի գրքերը, Ղ. Ալիշանի «Սիսուան» աշխատությունը, Հ. Ոսկյանի, Հ. Տեր-Ղազարյանի, Գր. Գալուստյանի և մի շարք այլ հայերեն ու օտարալեզու աշխատություններ): Լուսանկարների մասին խոսելիս, որոնք հատուկ շուք և նշանակություն են տալիս գրքին, հեղինակը լի մոռանում շնորհակալական խոսք ուղղել նրանց, ովքեր սիրով տրամադրել են իրեն հազվագյուտ և մեծ մասամբ առաջին անգամ հրատարակվող լուսապատկերները: Երախտիքի խոսք կա նաև բոլոր նրանց, ովքեր այլևայլ ձևերով օժանդակել են գրքի լույս աշխարհ գալուն: Ուսումնասիրության մեկ այլ կարևոր առանձնահատկությունն այն է, որ վերջում տրված է կարևորագույն բերդերի ֆրանսերեն համառոտ շարադրանքը: Սա, ինչպես հեղինակն է ասում, օտար ընթերցողներին մեր պատմամշակութային հուշարձանների պատմությանը ծանոթացնելու և պրոպագանդելու լավագույն միջոցներից է:

Գրքի առաջին բաժինը («Ներածություն») համակողմանի պատկերացում է տալիս Կիլիկիայի աշխարհագրական դիրքի ու տարածության մասին: Հեղինակը բավական հանգամանալից անդրադառնում է նաև Կիլիկիայի պատմությանը: Հայտնի է, որ Կիլիկիան ժամանակին մտել է Տիգրան Մեծի աշխարհագրական տիրույթի մեջ, և այդ ժամանակից հայերը ապրել են հռոմեացիների, բյուզանդացիների, արաբների տիրապետության տակ: Իսկ երբ խաչակիրները, գալով Արևելք, մտնում են Կիլիկիա, հայերի դիրքը ավելի է ամրապնդվում, և նրանք ապրում են համախմբված որևէ իշխանի կամ կայվածատիրոջ պատկանող բերդի ու գյուղի շրջանում:

Հայերի թիվը Կիլիկիայում սկսեց ավելի աճել Բագրատունյաց թագավորության անկումից հետո, XI դարում: Որպես արդյունք Բյուզանդիայի նենգ քաղաքականության, հայ ազնվականական տարբեր տոհմեր գաղթեցին Կիլիկիա ու նրա մերձակայքը, որտեղ, միանալով արդեն տեղում գտնվողների հետ, ավելի ամրացան ու դարձան տեղանքի իշխողներ: Մ. Հովհաննեսյանը մանրամասն ներկայացնում է հայ իշխանական տների պատմությունը, թե ինչպես իշխանությունը դարձավ թագավորություն, թե ինչպես Ռուբինյաններից գահը անցավ Հեթումյաններին ու ապա Լուսինյաններին, որոնց օրով էլ կիլիկյան հայկական թագավորությունն անկում ապրեց և անցավ Եգիպտոսի մամլուքներին: Չի խոսվում, սակայն, հայ թագավորության անկումից հետո Կիլիկիայում դեռևս մի քանի դար ապրող հայերի, նրանց ճակատագրի և եղերական տեղահանության մասին:

Հովհաննեսյանը Կիլիկիան և մերձակա Միջագետքի տարածքը բաժանում է վեց աշխարհագրական շրջանների և համապատասխանաբար այդ շրջաններով է անվանում տեղի բերդերը ու մեծ բազմաթիվ բերդերն ու դղյակները:

Պետք է ասել, որ բուն հայկական բերդերը, որպես կանոն, գտնվում են անմատչելի լեռնային Կիլիկիայում, որտեղ ժայռերի ծերպերին ու անհասանելի բարձունքներին, բերդերի հատակագծերը հարմարեցնելով ու ներդաշնակելով բնական ձևերին ու պայմաններին, կառուցվել են հարյուրավոր ամրոցներ, իշխանական դղյակներ, դրանց ենթակա հովանավորյալ վանքեր ու մենաստաններ և հաճախ հանդիպող պարսպապատ ավաններ ու բնակավայրեր (Այս բերդաքաղաքը, Լևոն Մեծագործի Լևոնկլա դղյակը և այլն):

Հարթավայրային շրջաններում, որտեղ բացակայում է բնական անմատչելիությունը, բերդերը ամրացվում էին հաճախ մինչև անգամ եռաշերտ պարիսպներով (Անազարբայի դեպքը), կամ ջրախանդակներով (Սելևկիա բերդը): Եռվային հատվածում նույնպես բնական պայման-

ներր մեծ դեր էին խաղում. շինարարական մի փոքր միջամտություն, այսինքն՝ պարիսպների բարձրացում, ցրահանդակների անցկացում, և բերդը դառնում էր անառիկ։ Հաճախ բերդերն ունեցել են իրենց հսկիչ փոքրիկ ծովային երկրորդ բերդերը՝ կառուցված մոտակա կղզյակների վրա (ինչպես՝ Հայտնի Կոռիկոսում և Այասում), որոնք գրեթե միշտ արհեստական խութերի միջոցով կապ են ունեցել բուն ցամաքային բերդի հետ։ Լեռնանցքերի վրա կանգնեցված բերդերի ստրատեգիական նշանակությունը շատ մեծ է եղել (ինչպես Բաղրասինը)։ Սրանք եղել են հսկիչներ և անընդհատ ձեռից ձեռք են անցել՝ կրելով բոլոր ժամանակների ու իշխանությունների ազդեցությունները։

Շատ բերդերում [Վահկա, Լամբրոն, Ցրլանլրկալե (Օձաբերդ), Թումլու բերդ և այլն] մասնագետները իրենց ուսումնասիրություններից և թույլատրված սահմաններում կատարած պեղումներից հետո հայտնաբերել են այն նույն սկզբունքները, շինարարական տեխնիկան ու հատակագծային լուծումները, որոնցով կառուցվել են բուն Հայաստանյան բերդերը։ Այս բերդերն իրենց ոճով մինչև անդամ աղերսներ ունեն ուրարտական բերդաշինության հետ, մի բան, որը մի անդամ ևս հավաստում է ակունքներին հարազատ մնալու միտումը։

Ինչ վերաբերում է անվանումներին, պետք է ասել, որ Միքայել Հովհաննեսյանը աշխատել է հնարավորին չափ տալ բերդերի հայկական անվանումները, խուսափել է օգտագործել թուրքական այսօրվա անվանափոխումները, որը համատարած երևույթ է Թուրքիայի տարածքի հայկական տեղանուններին համար։

Մխիթարյան հոր հրատարակած այս կոթողային գիրքը, որը թեև լրացումների ու որոշ ճշգրտումների կարիք ունի, տքնաջան աշխատանքի արդյունք է, շատ կարևոր մի ուսումնասիրություն հայկական և հատկապես Կիլիկիայի ամրոցաշինության բնագավառում։

Ա. Ժ. ՀԱԼԱՅՅԱՆ։